ՀՏԴ 82.09(398)

Բանահյուսություն

Նաիրա ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրակ. ինստ. ավագ գիտաշխատող,
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
E-mail: nairahambardzumyan@yahoo.com

Սիրանուշ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրակ. ինստ. ասպիրանտ,
կրտսեր գիտաշխատող,
E-mail: siranush.parsadanyan.2014@mail.ru

ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱԲ – ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆ – ԳԵՈՐԳ ԱՊՏՈՒԼԼԱՀՅԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ[1]

Սրբուհի Տյուսաբը հայ առաջին վիպասանուհին է: Նրա ստեղծագործության առանցքը կանանց ազատագրության հիմնախնդիրներն են՝ սոցիալ-տնտեսական, իրավական, կրթական, քաղաքական և ազգային գիտակցությունը, դրանց դրսևորումները և պաշտպանությունը: Իր հրապարակախոսության և վեպերի միջոցով Տյուսաբը փորձում էր հիմնավորել նաև ազատագրության կարևոր նախապայմանը՝ աշխատանքի գաղափարը, որը անկախություն կապահովեր կնոջ համար: Պետրոս

[1] Հոդվածը տպագրվել է ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային «Կանանց հիմնախնդիրները 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության մեջ» թեմատիկ ծրագրի շրջանակներում: Ծածկագիր՝ 2IT-6B118:

Ադամյանը և Գևորգ Ապտուլլահյանը ոչ միայն իրրև դերասան և լուսանկարիչ, այլ նաև ազգասիրական վսեմ զգացումներով և անկեղծ և յուրահատուկ խառնվածքով օծուն ներհուն մտավորականներ էին:

Ուսումնասիրության նպատակը *Սրբուհի Տյուսաբ - Պետրոս Ադամյան - Գևորգ Ապտուլլահյան բազմաշերտ նյութի գիտական համակարգումն է, ինչը կարևոր է հայ գրականության պատմության ընթացականության և զարգացման տեսանկյուններից:*

Ուսումնասիրության խնդիրը *Սրբուհի Տյուսաբ - Պետրոս Ադամյան - Գևորգ Ապտուլլահյան փոխհարաբերությունների գրական-մշակութային ներազդեցության տիրույթում գիտակցված ընթացքի տեսանելիության ապահովումն է: Կիրառել ենք կենսագրական և ֆենոմենոլոգիական մեթոդները:*

Եզրակացություն: *Գրական-մշակութային տիրույթում ներազդեցությունների ոլորտը հաճախ լի է հույզերով, զգացմունքներով, ապրումներով, և սակավ՝ բանականությամբ և արթուն դատողականությամբ: Ակնհայտ է, որ Սրբուհի Տյուսաբ - Պետրոս Ադամյան - Գևորգ Ապտուլլահյան փոխհարաբերությունները քննելիս, ուսումնասիրողները, հիմնականում առաջնորդվել են ակնհայտ փաստերի արձանագրման ճանապարհով՝ հետին պլան մղելով դրանց տրամաբանական համադրությամբ իրադարձությունների վերականգնման առավելությունը, որը մշտապես տեքստին հաղորդում է գեղարվեստական և մշակութային զարգացումների անկանխատեսելիությունը:*

Բանալի բառեր՝ *Սրբուհի Տյուսաբ, Պետրոս Ադամյան, Գևորգ Ապտուլլահյան, Կ. Պոլիս, քերթված, «Արեւելք» շաբաթաթերթ, Հովհաննես Թումանյան, ֆենոմեն:*

Н.Амбарцумян, С.Парсаданян

СРУБУИ ТЮСАБ - ПЕТРОС АДАМЯН - ГЕВОРК АПТУЛЛАХЯН ОТНОШЕНИЯ КАК ЛИТЕРАТУРНО-КУЛЬТУРНОЕ ВОЗДЕЙСТВИЕ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ

Србуи Тюсаб – первая армянская романистка. В основе ее творчества лежат вопросы женской эмансипации, проблемы

социально-экономического, правового, образовательного, политического и национального осознания, их проявления, а также идея охраны труда, которая способна обеспечить возможную свободу женщины. Петрос Адамян и Геворг Аптуллахян были не только артистом и драматургом, но и проникновенный интеллигенти, наделенными возвышенными патриотическими чувствами и честными необыкновенными характерами. Цель исследования – научная систематизация многоуровнего материала Србуи Тюсаб – Петрос Адамян - Геворг Аптуллахян, что является крайне важным с точки зрения хода и развития истории армянской литературы. Задача исследования – обозначить видимую связь сознательного перехода от феноменальных взаимоотношений между Србуи Тюсаб, Петросом Адамяном и Геворгом Аптуллахяном и воздействия этих отношений в литературно-культурной сфере, сложившегося в результате. Нами были применены биографический и феноменологический методы. Выводы: Сфера влияний в литературно-культурных отношений часто насыщен эмоциями, чувствами, переживаниями и, значительно реже, разумом и трезвыми суждениями. Очевидно, что при анализе вопроса о взаимоотношениях Србуи Тюсаб с Петросом Адамяном и Геворгом Аптуллахяном, исследователи в основном руководствовались способом фиксации очевидных фактов, отодвигая на задний план преимущество реконструкции событий с логическим соединением фактов, которое всегда передает тексту непредсказуемость художественного и культурного развития.

Ключевые слова: *Србуи Тюсаб, Петрос Адамян, Георг Аптуллахян, Константинополь, полосатый, еженедельник “Аревелк” (“Восток“), Оганес Туманян, феномен.*

N. Hambardzumyan, S. Parsadanyan

SRUBUHI TUSAB - PETROS ADAMYAN - GEVORK APTULLAKHYAN RELATIONSHIPS AS A LITERARY-CULTURAL ENVIRONMENTAL IMPACT

Srbuhi Tusab is the first Armenian woman-novelist. The core of her work was the issues of women's emancipation: socio-economic, legal, educational, political and national consciousness, their manifestations, as well as the defense of the idea of work, which would ensure possible independence for women. Petros Adamyan and Gevorg Aptullahyan were not only an artist and playwright, but also a soulful intellectual, endowed with sublime patriotic feelings and honest extraordinary characters. The aim of the study is the

scientific systemization of the multi-layered material of the Srbuhi Tyusab - Petros Adamyan - Gevorg Aptullahyan, which is extremely important from the angle of the course and development of the history of Armenian literature. The problem of the study is to ensure the visibility of the conscious flow from the phenomenal relationship between Srbuhi Tyusab, Petros Adamyan and Gevorg Aptullahyan and the resulting impact of these relations in the literary-cultural sphere. We used biographical and phenomenological methods. Conclusion: The sphere of influence in literary and cultural relations is often saturated with sentiments, feelings, emotional experiences, and seldom of intelligence and vigilant judgment. It is obvious that when examining the relationship between Srbuhi Tusab Petros Adamyan and Georg Aptullahyan, the researchers were mainly guided by the ability to fix obvious facts, moving from the background to the reconstruction of buildings with logical combination of facts, which always translates into a text of unpredictable and evolving humor.

Key words: *Srbuhi Tusab, Petros Adamyan, Georg Aptullahyan, Constantinople, striped, "Arevelk" ("East") weekly, Hovhannes Tumanyan, phenomenon.*

Ներածություն

Սրբուհի Տյուսաբ (Սրբուհի Վահանյան) - արևմտահայ կին գրող, բանաստեղծ, հրապարակախոս և հասարակական գործիչ:

19-րդ դարի երկրորդ կեսին օսմանյան կայսրությունը հայրիշխանական ավանդույթներով, հետամնաց և աղքատ երկիր էր: Չնայած բարեփոխումներին՝ օսմանյան պետությունն ուներ արտաքին պետական պարտքեր, բանակը քայքայված էր, գյուղացին ծանր հարկերի և հարստահարությունների ներքո էր, իսկ քաղաքաբնակ աշխատավորը գոյատևում էր օրավճարներով: Սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական այս խնդիրներին գումարվում էին ազատության ձգտող և օսմանյան ստրկության լուծը մի կերպ հանդուրժող փոքր ազգերի խնդիրները: Եվ քանի որ դեմոկրատական ճանապարհով հարցերի լուծումը չէր կարող իրական լինել օսմանյան կայսրության համար, որը ձգտում էր նմանվել Եվրոպային, ապա կառավարությունը այդ խնդիրը լուծում էր բռնության, սարսափի, ճնշումների, կողոպուտների, հալածանքների, առևանգումների ճանապարհներով:

Ազգային փոքրամասնությունները (այստեղ՝ հայերը) ոչ մի առաջընթաց չէին գրանցում բռնապետական երկրում: Փակվում էին հայկական պարբերականները, հրատարակչատները, թատրոնը: Արգելված էր այն

ամենը, ինչ կապված էր ազգային ինքնագիտակցության զարգացման հետ: Արգելված էին նույնիսկ հայոց պատմության և աշխարագրության դասերը: Թույլատրում էին միայն կրոնական բնույթի հավաքներ: Բռնապետական այդ տարիներին կարևոր էր մտավորականության կեցվածքը և դերակատարությունը: Հայկական դպրոցներ բացելը, կրթական-լուսավորական օջախներ և ընկերություններ հիմնելը օրախնդիր հարցեր էին, և գործում էին որպես ազգը և լեզուն պահպանելու միջոցներ: Հիմնադրվում էին դպրոցներ և վարժարաններ, որոնք ֆինանսավորվում էին բարեգործական ընկերությունների կողմից, սակայն աշակերտները սոսկ գրաճանաչ էին դառնում, քանի որ չկային դասավանդման հաստատված, մշակված համակարգ և մեթոդներ: Այսօրինակ սուղ պայմաններում էին ուսուցիչները փոխանցում իրենց սակավ գիտելիքները աշակերտներին՝ նպատակ ունենալով զարգացնել նրանց մեջ հայոց լեզվի, հայրենիքի ազգի ճակատագրի նկատմամբ պատասխանատվությունը: Այս ամենը հստակորեն գիտակցում էին և մեծ պատասխանատվություն էին կրում արևմտահայ նշանավոր մտավորականները՝ Հակոբ Պարոնյանը, Գրիգոր Զոհրապը, Արփիար Արփիարյանը, Մատթեոս Մամուրյանը և ուրիշներ, որոնք գլխավորում էին լուսավորական շարժումը, որը նախ և առաջ, հայոց ազգի ինքնապաշտպանական ռեակցիան էր բռնության և բնաջնջման դեմ: Ահա այս համատեքստում էր, որ 1860-70-ական թվականներին և դրանից հետո, ուսուցման գործընթացներում ներգրավվեցին նաև հայ մտավորական կանայք և սկսեցին իրենց գրական-մշակութային և սոցիալ-հասարակական գործունեությունը ծավալել:

1870-80-ական թվականները շատ բարդ և կարևոր էին հայ մշակույթի և հասարակական կյանքի զարգացման տեսանկյունից: Երիտասարդները կրթվում էին եվրոպական համալսարաններում, մասնավորապես, Փարիզում, և ծանոթանում էին աշխարհի առաջադեմ գրողների ու մտավորականների աշխատանքներին: Ու քանի որ հռչակված էր մարդասիրության, եղբայրության և հավասարության դարաշրջան, նրանք ապրում էին այդ գաղափարներով և վերադառնալով օսմանյան կայսրության հայաշատ քաղաքներ, հիմնականում, Կ. Պոլիս և Զմյուռնիա, վճռական ազդեցություն էին թողնում ոչ միայն հայկական, այլև թուրքական մշակույթի և արվեստի ոլորտներում, քաղաքականության և սոցիալ-տնտեսական բնագավառներում: Այս իրողություններն են ահա ի հայտ գալիս, երբ ուսումնասիրում ենք 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականությունը, մշակույթը և մամուլը, և դրանք են, որ ձևավորել են օսմանյան կայսրությունում ապրող հայ մտավորականների փոխհարաբերությունները: Հետևաբար, 19-րդ դարի երկրորդ կեսը

ուսումնասիրելիս, անհնար է վերլուծել երևույթները, դեպքերը կամ մտավորականներին առնչվող հիմնահարցերը՝ առանց վերոնշյալ իրողությունները հաշվի առնելու: Այս առումով, ուշագրավ են Սրբուհի Տյուսաբ - Պետրոս Ադամյան - Գևորգ Ապտուլլահյան փոխներազդեցությունները, որոնք և կքննենք ուսումնասիրության մեջ:

Սրբուհի Տյուսաբ - Պետրոս Ադամյան ներազդեցությունների տիրույթը

Հայ առաջին արձակագրուհու երկերը ուսումնասիրելիս անհնար է չանդրադառնալ Սրբուհի Տյուսաբ - Պետրոս Ադամյան - Գևորգ Ապտուլլահեան բարեկամությանը, քանի որ մարդկային հազվագյուտ հատկանիշներով երեք մտավորականները կարևոր ներդրում են ունեցել 19-րդ դարի երկրորդ կեսի Կ. Պոլսի հայ գրական-մշակութային տիրույթում:

1887-1889 թվականներին, «Դպրոցասիրաց» ընկերության մեկենասությունից բացի, Սրբուհի Տյուսաբը ստանձնել էր նաև «Ասիական ընկերության»[1] լսարանի հովանավորությունը: Այստեղ ընթերցվում էին տարբեր բանախոսություններ, և ի նպաստ ընկերության, կազմակերպվում էին գրական-երաժշտական երեկոներ, կատարվում էին հանգանակություններ:

[1] ***Ղողոսեան Հ.Ե.Վ.,*** *Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, հ. Ա, Վիեննա, 1957, 784 էջ:*



Պետրոս Ադամյանի և հայ առաջին վիպասանուհու փոխհարաբերությունների մասին հայ ուսումնասիրողները խոսել են բացառապես Ադամյանի հոբելյանի առիթով, և նշվել է միայն 1888 թվականի դեկտեմբերի 10-ին Պետրոս Ադամյանի բեմական գործունեության 25-ամյա հոբելյանի[1] տոնակատարության ժամանակ նրա արտասանված մի արձակ բանաստեղծությունը («Որդեկորոյս ծնողք մը»), որը գրել էր Սրբուհի Տյուսաբը: Պետրոս Ադամյանի և Սրբուհի Տյուսաբի փոխհարաբերությունները ամենևին էլ դիպվածային չեն եղել, այլ՝ փոխադարձորեն մտերիմ և բարեկամական, ինչպես որ դիպվածային և պատահական չեն եղել Սրբուհի Տյուսաբի և Գևորգ Ապտուլլահյանի փոխհարաբերությունները: Դրանց ուսումնասիրությունը թույլ է տալիս՝ պարզելու և առավել լավ պատկերացնելու Ադամյանի կյանքի վերջին շրջանի, ավելի ճիշտ, 1888-1889 թվականներին առնչվող որոշ հիմնախնդիրներ, այդ թվում՝ աշխարհայացքի հարցերը:

Ադամյանի հոբելյանը 1888 թվականի դեկտեմբերի 10-ին նշելու լուրը առաջին անգամ ծանուցվել է «Արևելք» օրաթերթում, թե այն «պիտի տոնվի թատերական շքեղ ներկայացմամբ մը, հորում հայազգի տաղանդավոր դերասանն յուր գլխավոր դերերե միույն մեջ փայլելե զատ, պիտի

[1] *Հոբելյանի մասնախումբը ղեկավարել է Սրբուհի Տյուսաբը:*

արտասանե Վսեմաշուք Տիկին Տյուսաբ փաշայի ընտիր մեկ մենախոսությունն»[1]: Հոբելյանը նշելուց երկու օր առաջ, դեկտեմբերի 28-ին, թերթը զետեղում է հանդեսի ծրագիրը, որտեղ արդեն ճշտված է մենախոսության խորագիրը՝ «Քերթողն որդեկորույս. հեղին. տիկին Սրբուհի Տյուսաբ. պիտի ներկայացնե Պ.Հ. Ադամյան»[2]: Թե ի՞նչ բնույթ է ունեցել Տյուսաբի բանաստեղծությունը, ստույգ հայտնի չէ, քանի որ բնագիրը չի պահպանվել: Նշենք, որ Տյուսաբին առնչվող հոդվածներում այդ տեղեկությունները լի են զանազան անճշտություններով: Ժամանակի մամուլում կան նաև հիշատակություններ այն մասին, թե այդ մենախոսությունը կամ արձակ բանաստեղծությունը չի կրել «Որդեկորույս ծնողք մը» խորագիրը, իսկ Ադամյանն էլ չի մարմնավորել է Տյուսաբի ապրումները: Հանդեսի հաջորդ օրը «Արևելքը»[3] ծանուցել է մանրամասնություններ հոբելյանից, որոնցից պարզ է դառնում, թե ով է արտասանել մենախոսությունը՝ «...Ի բեմ եկավ, պ. Ադամյան՝ Վսեմ. Տիկին Տյուսաբ փաշայի հորինած սրտահույզ և գեղեցիկ մենախոսության մեջ որդեկորույս հյուծյալ քերթողի կերպարանաց ներքեւ մահամերձ և երազացնոր, օրհասականի խեղդուկ և սրտաճմլիկ հազով մը: Մեծանուն դերասանին հաջողությունն այնքան մեծ եղավ այս տեսարանին մեջ, որ հանդիսականք չորս անգամ ի տես կոչեցին զինքն եռանդագին ծափահարությամբք և կեցցեներով»[4]:

Հոբելյանից մի քանի շաբաթ անց փորձ է արվել նաև հրապարակայնորեն վարկաբեկել Ադամյանին: Այդ հանգամանքին զումարվել նաև է հանդեսի ծախսերի վիրավորական հաշիվը, որը ներկայացվել է Պետրոս Ադամյանին, և որը շարժել է մեծ դերասանի, գրողի, նկարչի և հասարակական գործչի զայրույթն ու վրդովմունքը:

---

[1] ***«Արևելք»,*** *Կ. Պոլիս, 1888, էջ 2:*

[2] *Սույն քերթվածի առիթով ուշագրավ է հետևյալ նկատումը՝ Տյուսաբը այս քերթվածը գրել է մինչև Պետրոս Ադամյանի հոբելյանը, այսինքն, մինչև 1888 թվականի դեկտեմբերի 10-ը, քանի որ բազմաթիվ վկայություններ կան այն մասին (թեպետ՝ քերթվածի բնագիրը պահպանված չէ), թե Ադամյանը կարդացել է այն իր երեկույթի ժամանակ:*

[3] *1901 թվականին տպագրած Տյուսաբի մահախոսականում, «Արևելք» օրաթերթը նշում է, թե Ադամյանը հոբելյանի ժամանակ արտասանել է նրա «Որդեկորույս ծնողք մը» մենախոսությունը, որը «մեծ տպավորություն թողուց ունկնդիրներու վրա»: Տե՛ս* ***«Արևելք»,*** *Կ. Պոլիս, 1901, թիւ 4512, էջ 3: Նույնն է պնդում «Արտեմիս» հանդեսի խմբագիրը՝ Մառի Պեյլերյանը: Տե՛ս* ***«Արտեմիս»,*** *Եգիպտոս, Զ, 1901, թիւ 1, էջ 26:*

[4] ***«Արևելք»,*** *1888, Կ. Պոլիս, 11 դեկտեմբերի, էջ 1:*

1889 թվականի փետրվարի 2-ին Ա. Ստեփանյանին գրած նամակներից մեկում, դերասանը պատմում է, թե *բոլորը կատաղած են* իր դեմ ցուցաբերված անբարյացակամության առիթով և ավելացնում է՝ «Տիկ. Սրբուհի Տյուսաբ նույնպես»[1]: Այս առիթով, Գ. Ստեփանյանը նկատում է, թե հայտնի չէ, թե վիպասանուհի Սրբուհի Տյուսաբը ի՞նչ դիրք է բռնել: Մամուլում այդ մասին ոչինչ չկա, սակայն առկա է Տյուսաբի մեկ նամակը, որը օգնում է կռահելու գրողի վերաբերմունքը հետաքրքրող հարցի և Ադամյանի նկատմամբ:

1888 թվականից հետո Կոստանդնուպոլսում Պետրոս Ադամյանի հասարակական գործունեության առիթով քիչ տեղեկություններ են հայտնի և այդ առիթով ուշագրավ է Տյուսաբի մի նամակը, որը գրված է 1889 թվականի փետրվարի 12-ին (նոր տոմարով) և ուղղված է իր մտերիմ

---

[1] *1889 թվականի մարտին, Պետրոս Ադամյանը հրավիրվում է մասնակցելու Տյուսաբի բարեգործական մի նախաձեռնությանը, սակայն «Եկած է ծանուցանելու, որ կոկորդի հիվանդության մը պատճառով, որ երեք շաբաթե ի վեր զինքը կնեղե, չպիտի կրնա մասնակցիլ Լսարանին, ըստ բժշկական պատվերի, որ դեռ տասնևհինգ օրվան կատարյալ հանգիստ կը հանձնարարե նմա: Զայնն արդարև մարած է, սուր և նվաղուն շչյուններով կելլա կոկորդեն: Բայց ներողություն մը խնդրեց այնչափ սրամտությամբ, այնչափ արվեստիվ, այնչափ նուրբ խոսքերով համեմյալ, որ բոլոր այն ծափահարությունները, որք պահված էին իր մենախոսությանցն համար եռանդագին պայթեցան միահաղույն: Պ. Ադամյան հայտնեց միանգամայն թե պատրաստ է ուրիշ անգամ բարենպատակ գործի մը համար նվիրել իր սիրահոժար մասնակցությունն անձնվիրաբար»:* ***«Արևելք»,*** *1889, Կ. Պոլիս, 19 մարտի, էջ 2:*

բարեկամ, ականավոր հայ լուսանկարիչ, Ադամյանի հոբելյանական հանձնաժողովի անդամ Գևորգ Ապտուլլահին: Այն հրապարակել է Մխիթարյան միաբանության հայր Եսայի Տայեցին՝ «...Անցյալ երկուշաբթի օր Ադամյան եկավ. խուռն բազմություն ունեի, և բոլոր օտարազգիներն խիստ գոհ եղան յուր ձևերեն: Երկու օր հառաջ՝ Dorinne-ին[1] տոնն էր: Ադամյան զայդ իմանալով եկավ կիրակի առավոտուն և օրն ի բուն մեզի հետ անցուց, այսինքն 25-ի չափ հրավիրելոց հետ՝ որոնց առջև յուր գաղդիական մենախոսությունն ըրավ և զամենքն սքանչացուց»[2]: <…> Հայերը ոչ միայն այդ մարդուն հարգը չեն ճանաչեր, այլ կը հարստահարեն, անճոռնի Նիկողոսյանի մի անհիմն դատապարտություններն հրատարակելով, զորս Ադամյան պատասխանելով ի դերև հանեց, և շատերն ստուգություններ առնելով համոզվեր են անոնց անստուգությանց վրա: <…> Այսօր երեքշաբթի վայրիկ մի Ադամյան եկավ և իմացուց ինձ թե հանձներ են իրեն երեկ՝ հաշիվն յուր հոբելյանի: Երևակայե 80 ոսկվո չափ կարծեմ ծախք մի հաներ են, տեսա հաշիվը, բայց չեմ հիշեր, իրապես, զոր օրինակ 1300 դահեկան իր կենսագրության հրատարակության համար, և չգիտեմ ի՛նչ գումար, երևակայե՛, իրեն տրված պսակին և ծաղկեփունջին համար: Լսվա՞ծ բան է արդյոք, որ ինքը դերասանը յուր անձին ծաղիկ նվիրե, Ադամյան ինքզինքեն դուրս ելած էր, կատղած որչափ կրնաս երևակայել, այնուհետև կ'ելնեն մարդը կը դատապարտեն, կը քարկոծեն: Ա՜հ, բարեկամս Պոլիս գեղարվեստի երկիր չէ ապահովապես»[3]: <…> «...Մոռցա իմացնելու քեզ թե Ադամյան նամակ գրեր է քեզ, բայց Ալեքսանդրիայի հասցեով, առի՞ր արդյոք զայն»[4]:

1889 թվականի մարտին Սրբուհի Տյուսաբը ձեռնարկում է բարեգործական երեկույթ, և բացի բարձր դասի տարբեր ներկայացուցիչները և նշանավոր մարդիկ, Պետրոս Ադամյանը նույնպես հրավիրվում է մասնակցելու բարեգործական այդ ձեռնարկությանը, որին Ադամյանը համաձայնվում է մեծ սիրով[5]: Նախապես որոշվում է միջոցառումն անցկացնել մարտի 12-ին

---

[1] *Սրբուհի Տյուսաբի դուստրը:*

[2] ***Տայեցի Ե.,*** *Հուշագիր կենաց և գործունեության նախկին կայսերական լուսանկարիչ Գեորգ Ապտուլլահի, Վենետիկ, 1929, էջ 116-118:*

[3] ***Տայեցի Ե.,*** *Հուշագիր կենաց և գործունեության նախկին կայսերական լուսանկարիչ Գեորգ Ապտուլլահի, Վենետիկ, 1929, էջ 116-118:*

[4] *Գևորգ Ապտուլլահն այդ ժամանակ գտնվում էր Եգիպտոսում: Ինչպես երևում է Ադամյանի և Ապտուլլահի միջև ևս որոշ մտերմություն է եղել: Պոլսահայ բանաստեղծ և գրականագետ Միհրան Հովհաննիսյանի վկայությամբ Ապտուլլահը Ադամյանին խորհուրդ է տվել մեկնել Կովկաս, ուր կարող էր նրան ժպտալ բախտը (տես Ե. Տայեցու նշված աշխատությունը, էջ 86-88):*

[5] *1889 թվականի մարտի 19-ին տեղի ունեցած հանդիսության մասին գրել է նաև «Մշակի» թղթակից Հայկակը (Արփիար Արփիարյան):*

(հին տոմարով), որտեղ ինչպես ծանուցում է «Արևելք» օրաթերթը՝ «Պետրոս էֆ. Ադամյան պիտի արտասանե հայերեն «Որդեկորույս քերթողն» հեղինակություն Վսեմ. Տիկին Տյուսաբ փաշայի և ֆրանսերեն՝ Շեյքսբիրի «Համլեթ» թատերգութենեն մի նշանավոր հատված»[1]: Սակայն, այնուհետև, «ծանուցանել է», որ կոկորդի հիվանդության մը պատճառով, որը «երեք շաբաթե ի վեր զինքը կնեղե, չպիտի կրնա մասնակցիլ Լսարանին, ըստ բժշկական պատվերի, որ դեռ տասնևհինգ օրվան կատարյալ հանգիստ կը հանձնարարե նմա: Ձայնն արդարև մարած է, սուր և նվաղուն շչյուններով կելլա կոկորդեն: Բայց ներողություն մը խնդրեց այնչափ սրտմտությամբ, այնչափ արվեստիվ, այնչափ նուրբ խոսքերով համեմյալ, որ բոլոր այն ծափահարությունները, որք պահված էին իր մենախոսությանցն համար եռանդագին պայթեցան միահամուռն: Պ. Ադամյան հայտնեց միանգամայն թե պատրաստ է ուրիշ անգամ բարենպատակ գործի մը համար նվիրել իր սիրահոժար մասնակցությունն անձնվիրաբար»[2]: Ուշագրավ է, որ աշխարհահռչակ էռնեստո Ռոսսին[3], որն այդ ժամանակ ներկայացումներ ուներ Պոլսում, նույնպես հրավիրվել է ներկա գտնվելու հայ արվեստագիտին ներկայացմանը[4]: Այս տխուր դեպքերից մի քանի ամիս անց Սրբուհի Տյուսաբը մեկնել է Փարիզ՝ բուժվելու նպատակով, իսկ երբ վերադարձել է Կ. Պոլիս, Պետրոս Ադամյանը արդեն մահացել էր[5]: Նրա աճյունը ամփոփված է

---

[1] ***«Արևելք»,*** *1889, 2 մարտի, էջ 2:*

[2] ***«Արևելք»,*** *1889, 19 մարտի, էջ 2:*

[3] *Էռնեստո Ռոսսիի առիթով Հովհաննես Թումանյանը իր հուշերում գրում է՝ «Իննսնական թվականների սկզբներին էր: Աշխարհահռչակ իտալացի դերասան Ռոսսին եկավ Թիֆլիս: Էն ժամանակ, ինչքան հիշում եմ, Թիֆլիսում բացի հայոց դերասանական խումբը՝ ուրիշ խումբ չկար: Հայոց խումբն էլ մեծ մասամբ կազմված էր սիրողներից հանգուցյալ Գևորգ Չմշկյանի գլխավորությամբ: Ես էլ էի սիրողների մեջ: Ռուս անտրեպրենյորը մեզ հրավիրեց Ռոսսուն դիմավորելու: Եվ ահա մենք, իբրև դերասանական խումբ գնացինք կայարան, Ռոսսուն ընդունեցինք ծաղկեփնջերով ու երաժշտությունով: Ռոսսին մեզ հրավիրեց իր բոլոր ներկայացումներին: «Համլետի» ներկայացման գիշերն էր: Ամբողջ հասարակությունը անհամբեր սպասում էր վարագույրի բացվելուն, որ Ռոսսու «Համլետ»-ը համեմատի Ադամյանի «Համլետ»-ի հետ: Դուրս եկավ Ռոսսին, հսկա դերասանը - Դանիայի դժբախտ ու փիլիսոփա արքայազունը: Հասարակությունը հափշտակված, շունչն իրեն պահած հետևում էր մեծ ողբերգուին: Գործողությունը վերջացավ: Վարագույրն իջավ: Թատրոնը դղրդաց միահամուռ ու անընդհատ ծափահարությունից: Ռոսսին ստիպված մի քանի անգամ բեմ դուրս եկավ՝ մինչև որ հասարակությունը հանգստացավ: Եվ հասարակությունը հանգստացավ թե չէ, նույնիսկ Ռոսսու թարմ խաղի ահագին տպավորության տակ գրեթե միաձայն արձակեց իր վճիռը. - Սքանչելի է... Բայց Ադամյանին չի հասնիլ»: Տե՛ս* ***Թումանյան Հ.,*** *Ընտիր երկեր 2 հատորով, Ե., հ. 2, Սովետ. գրող, էջ 417:*

[4] ***«Արևելք»,*** *Կ. Պոլիս, 1889, թիւ 1559: Անհայտ պատճառներով Ռոսսին չի մասնակցել այդ հանդեսին:*

[5] *Ադամյանը մահացել է 1891 թվականի հունիսի 3-ին, Կ. Պոլսում:*

վիպասանուհու սիրելի ուսուցչի՝ Մկրտիչ Պեշիկթաշլյանի շիրմի կողքին՝ Շիշլիի գերեզմանատանը:

Պետրոս Ադամյանի մահվան 25-ամյակի առիթով Հովհաննես Թումանյանը գրում է Ադամյանի հետ կապված մի փոքրիկ միջադեպի մասին, երբ ինքը դեռ 14 տարեկան պատանի էր, և Պետրոս Ադամյանը եկել էր Թիֆլիս՝ «Վարդանանց պատերազմի» ներկայացմանը Եղիշե խաղալու[1]: Թումանյանը հաջողում է ոչ միայն մասնակցել, այլև զինվորի դեր խաղալ այդ ներկայացմանը և կոմիկական վիճակում հայտնվել՝ «Մինչև անգամ մի գիշեր էլ խաղացի նրա հետ: Էդ խաղը, որ բոլորովին անակնկալ, մի սկանդալ դուրս եկավ ու խեղճ Ադամյանին գրեթե սպանեց բեմի վրա, հենց էդ խաղն էլ պատճառ եղավ, որ ես ծանոթացա նրա հետ: Էդ էլ էսպես եղավ: Պոլսից Թիֆլիս էր եկել իր ժամանակին հայտնի դերասան Կյուրեղյանը և, եթե չեմ սխալվում, տիկ. Հրաչյայի հետ «Վարդան Մամիկոնյան» էին խաղալու: Ահա այդ խաղի մեջ Ադամյանն էլ վերցրել էր Եղիշեի դերը»[2]: Խաղի ընթացքում մի փոքրիկ զավեշտալի միջադեպ է տեղի ունենում, որի ընթացքում Ադամյանը բարկանում է, բայց հետո, իհարկե, ներողամտությամբ է վերաբերվում Թումանյանին՝ «Մյուս օրն էր թե մի երկու օրից հետո, պատմեցին, թե այժմ Ադամյանն էլ բարկացած չի, ծիծաղելով է պատմում էդ դեպքը և հարցնում էր, ուզում էր ինձ տեսնի: Ես գնացի, զարմանալի սիրով ու քաղաքավարությամբ ընդունեց, մանավանդ, երբ իմացավ Ներսիսյան դպրոցի աշակերտ եմ և ինչ պատճառով էի գնացել, իրեն գրքերից մինն էլ նվիրեց ի հիշատակ Վարդանանց պատերազմի ներկայացմանը և իմ կարճատև - բայց աղմկալի բեմական գործունեության: Նրանից հետո մի քանի անգամ եղա մոտը: Ինձ թվաց մի շատ քաղաքավարի ու քնքույշ, բայց հիվանդ մարդ, և, չգիտեմ ինչու, մենակ մարդ»[3]:

«Սրբուհի Տյուսաբ - Գևորգ Ապտուլլահյան[4]»

---

*[1] Ներսիսյան դպրոցի աշակերտներին արգելված էր թատրոն գնալը, քանի որ դպրոցի վերակացու պարոն Գրիգորը «թատրոնը համարում էր անբարոյականության վայր և ամեն կերպ աշխատում էր «էս արդար երեխանցը» հեռու պահի էն նզովյալ շինությունից» Տե՛ս **Թումանյան Հ.,** Ընտիր երկեր 2 հատորով, Ե., հ. 2, Սովետ. գրող, էջ 413:*

[2] Ն.տ., էջ 414 (544):

[3] Ն.տ., էջ 416:

[4] Ապտուլլահ Գևորգ կամ Ապտուլլահյան, հասարակական և մշակութային գործիչ: Ծնվել է 1839 թվականի հունիս 28-ին, Կոստանդնուպոլսում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Լուսավորչեան վարժարանում: 1852-58 թվականներին սովորել է Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում: Սովորել է Մկրտիչ Աճեմյանի և Թովմաս Թերզյանի հետ, աշակերտել է Հայր Ղևոնդ Ալիշանին: Ավարտելով վարժարանը՝ վերադարձել է Կ. Պոլիս, նվիրվել լուսանկարչական աշխատանքին, որը նոր-նոր էր մուտք գործում Օսմանյան կայսրություն: Եղբայրների (Վիգեն և Հովսեփ) հետ Կ. Պոլսում հիմնել է լուսանկարչական կենտրոն, լուսանկարչական արվեստը հասցրել կատարելության, եղբայրների հետ

ներազդեցությունների տիրույթը

1889 թվականի նոյեմբերին Տյուսաբը դստեր հետ մեկնում է Փարիզ՝ բուժվելու նպատակով: Ճանապարհին կանգ է առնում Բուլղարիայի Ֆիլիպե (Պլովդիվ) քաղաքում, որտեղ նյարդաբան Ժան Մարտեն Շարկոն նրա մոտ հայտնաբերում է նյարդային սուր բորբոքումներ, սակայն իր նշանակած բուժումով էապես թեթևացնում է Տյուսաբի վիճակը: Մոտ երկու տարի Տյուսաբը մնում է Փարիզում, որտեղ նշանավոր կոմպոզիտորներ Շառլ Գունոն և Ամպրուազ Թոման փայլուն ապագա են գուշակում նրա դստերը երաժշտական ոլորտում: Մայր լինելու գաղափարի շուրջ Տյուսաբը մտորում է հետևյալ կերպ՝ «Մայրը մարդկութեան նախնական գիրքն է, ով որ չգիտե սոյն գրքին մեջ հեգել, անկարող պիտի ըլլա միշտ բնութեան մեծ գրքեն կարդալու, զի կույր մ'է նա, զի մայր անունը սիրո անբավությունը կը պարունակե, եւ ով այդ բառը չըմբռներ, արարչության վսեմագոյն վանկեն զրկված կմնա»:[1]

Լուսանկարիչ Գէորգ Ապտուլլահին[2] ուղղած վերոնշյալ թվակիր (1889, 12 Փետրուար) նամակում Սրբուհի Տյուսաբը գրում է, թե «Տօրինի անուան տօնախմբութեան առթիւ, մեծանուն դերասան Պետրոս Ադամեան «իմանալով կուգայ եւ օրն ի բուն» Բերայի իրենց տան մէջ կը մասնակցի

արժանացել սուլթանական պալատի լուսանկարչի կոչման, իսկ Վիգենին շնորհվեց «Օսմանիե» պատվանշան: Եղել է Օսմանյան կայսրերի անձնական լուսանկարիչը, լուսանկարել է մի շարք թագավորների, իշխանների, դիվանագետների, ստացել է պետական 8 շքանշան և 3 մեդալ: Սերտորեն կապված է եղել հայ մշակութային կյանքին: Աշխատակցել է պոլսահայ մամուլին: 1874 թվականին նրա թարգմանությամբ հրատարակվել է գերմանացի արևելագետ Մորտմանի աշխատությունը բևեռագրերի մասին՝ «Խայտային բևեռագիր արձանագրությունների ուսումնասիրությունները», որը լույս է տեսել Պոլսում, 1874 թվականին: Անձնական ծանոթություն և գրավոր կապ է ունեցել ականավոր հայ արվեստագետների հետ, այդ թվում՝ Պետրոս Ադամյանի, Հովհաննես Այվազովսկու և ուրիշների: Մահացել է 1918 մայիսի 3-ին, Կոստանդնուպոլսում:

[1] ***«Կրթություն»,*** *Ե., 2007, 4 ապրիլի, թիւ 13(250), էջ 4:*

[2] *Տե՛ս* ***Abdullah Frères: Osmanlı sarayının fotoğrafçıları,*** *Yapı Kredi Kültür Sanat Yayıncılık, 1998, 247p. Ապտուլլահ Եղբարք. Օսմանեան Պալատի նկարիչները, գրքի 111-174 էջերը ընդգրկում են Սրբուհի Տյուսաբի նամակները, թվով 13, ուղղված Գէորգ Ապտուլլահին: Սույն գրքի օրիգինալը գտնվում է Միչիգանի համալսարանում: Էնկին Էօզենտեսը «Ապտուլլահ Եղբարք» գրքի 111-րդ էջում գրում է՝ «Տիւսաբ, անոր (Գէորգ Ապտուլլահ) անհատականութեան եւ արուեստին կը հիանար պաշտելու աստիճան: Այս երկու արուեստագէտներու, իրարու գործերուն նկատմամբ ունեցած փոխադարձ հիացումը, յետագային վերածուեցաւ սիրային կապի մը»: Սրբուհի Տյուսաբի նամակները առաջին անգամ հրատարակվել են Հ. Եսայի Տայեցու «Յուշագիր կենաց եւ գործունեութեան նախկին կայսերական լուսանկարիչ Գէորգ Ապտուլլահի», 269 էջ, հատորում, որը տպագրվել է 1929 թվականին Վենետիկ Ս. Ղազար:*

հաւաքոյթին եւ ֆրանսերէն մենախօսութեամբ հիացում կ'առթէ 25ի չափ հրաւիրեալներուն»:[1]

1891 թվականին Տյուսաբը վերադառնում է Կ. Պոլիս: Սակայն Պոլիս վերադառնալուց մի քանի ամիս անց թոքախտից մահանում է նրա դուստրը՝ տասնութամյա Դորին: Տյուսաբը այդպես էլ չի հաղթահարում աղջկա մահը: Նա առանձնանում է գրականությունից և մարդկանցից, որոնց այնքան սիրում էր: Այդ առիթով Սիպիլը գրում է՝ «Գրողներուն երիցագույնը, խոսողներուն գերագույնը և զգացողներուն ծայրահեղագույնն է իր սեռին համար… Ինքը հանդուգն «ֆեմինիստ» մը երկերուն մեջ, անկեղծ արհամարհող մը կեղծավոր պատշաճությանց, քաջություն ունեցած է ըսելու ճշմարտություններ, որոնց առջևեն զարհուրած ետ-ետ պիտի փախչեր մեր պչրասեր կիներուն ծփծփուն առաքինությունը <…>»: «Իր մէջ մայրը կնոջմէն ու գրագետէն ավելի զորավոր եղաւ»[2] :

---

[1] ***Մարբասլան Ի.,*** *«Սրբուհի Տիւսաբին հետքերուն վրայ», «Մարմարա», 2006, 24 սեպտեմբեր, էջ 3:*

[2] ***Վարշամյան Ա.,*** *«Կնոջ ազատության ջահակիրը», «Եթեր», Ե., 1911, թիւ 9 (07-13 մարտի), էջ 10-11:*

Դորիի մահից հետո Գէորգ Ապտուլլահին ուղղված մեկ այլ թվակիր նամակում (11 ապրիլի, 1893) կարդում ենք՝ «Վարդենիներ ճերմակ տնկել տուի, որպեսզի իրենց բուրմամբը յաւիտենական քունը օրօրէն Անմեղ Հրեշտակիս»:[1]

Տյուսաբի ծննդյան 120-ամյակին և մահվան 50-ամյակին նվիրված մի հոդվածում Ալբերտ Շարուրյանը գրում է՝ «Աշնահար դէմքով ու վշտամած աչքերով կնոջ համար դստեր սենեակը դարձել էր մի մատուռ, ուր փակւում էր նա, երկար և տառապալի աղօթում մանուշակներով ու դաշտային ծաղիկներով շրջանակուած նկարի առաջ: Սեւահանդերձ կինը տնից դուրս էր գալիս միայն Շիշլիի լատինաց գերեզմանատուն երթալու համար, որտեղ ճերմակ վարդենիների օրօրի ներքոյ ննջում էր նրա խարտիշագեղ Դորին: Այդպէս շարունակուեց տասն ձիգ տարինը, մինչեւ որ ձմեռային մի օր, 1901ի Յունուարի 16-ին, մահը գրկեց նաեւ սգակիր մորը»:[2]

Եզրակացություն

19-րդ դարի երկրորդ կեսին օսմանյան կայսրապետությունում ստեղծագործած կին հեղինակների գրականությունը, սոցիալ-հասարակական գործունեությունը և գրական-մշակութային փոխհարաբերությունները սակավ են ուսումնասիրված: Այդ է պատճառը, որ սույն աշխատանքը հայ գրականության ընթացքի և զարգացման հարցերի համատեքստում կարևորվում է ներդրումային դերով:

19-րդ դարի երկրորդ կեսին իր դերակատարությունը գործառականորեն հաստատած զարթոնքի շարժումը խորապես ներազդել և փոխակերպել էր հասարակության ավանդական կենսաձևերը՝ ավանդույթները և հայրիշխանական մոտեցումները՝ սոցիումի հայացքը ուղղելով դեպի պատմաքաղաքական և իրավաքաղաքական համակարգերը: Դրանք ձևավորում էին նոր կողմնորոշումներ, նոր արժեքներ՝ ուրվագծելով 19-րդ դարի երկրորդ կեսի Կ. Պոլսի և այլ հայաշատ քաղաքների հայկական միջավայրերը: Այդ համատեքստում՝ ազատությունը մարդկային փոխհարաբերություններում իրացվում էր փոխադարձության սկզբունքով, սիրո և հավատարմության անվերջ որոնումներով և դրսևորումներով, և դրա գերագույն օրինակը *Սրբուհի Տյուսաբ - Պետրոս Ադամյան - Գևորգ Ապտուլլահեան* մտավորական եռյակի բարեկամությունն էր: Հարկ է նշել, որ մարդու ներքին ազատությունը և ներդաշնակությունը՝ ճշմարիտ փոխհարաբերությունների ազատության տիրույթում, երևութանում է որպես

---

[1] ***Տայեցի Ե.,*** *Յուշագիր կենաց եւ գործունեութեան նախկին կայսերական լուսանկարիչ Գէորգ Ապտուլլահի, Վենետիկ - Ս. Ղազար, 1929, էջ 129:*

[2] ***Շարուրյան Ա.,*** *«Սրբուհի Տիւսաբ» (Ծննդյան 120ամեակին եւ մահուան 50ամեակին առթիւ), «Զարթօնք», ԻԴ տարի, թիւ 213(7032), էջ 2:*

մարդկային գոյության հոգևոր և բարոյական հիմք: Ուսումնասիրությունը ուշագրավ է նաև մարդաբանության, մարդու՝ որպես ուսումնասիրության օբյեկտի տեսանկյունից:

Գրականություն

1. «Արևելք», Կ. Պոլիս, 1888, էջ 2:
2. «Արևելք», 1888, Կ. Պոլիս, 11 դեկտեմբերի, էջ 1:
3. «Արևելք», Կ. Պոլիս, 1901, թիւ 4512, էջ 3:
4. «Արևելք», 1889, 19 մարտի, էջ 2:
5. «Արևելք», 1889, 2 մարտի, էջ 2:
6. «Արևելք», 1889, 19 մարտի, էջ 2:
7. «Արտեմիս», Եգիպտոս, Զ, Կ. Պոլիս, 1901, թիւ 1, էջ 26:
8. **Թումանյան Հ.**, Ընտիր երկեր 2 հատորով, Ե., հ. 2, Սովետ. գրող, 544 էջ:
9. **Իգնա Սարբասլան**, «Սրբուհի Տիւսաբին հետքերուն վրայ», «Մարմարա», 2006, 24 սեպտեմբեր, էջ 3:
10. «Կրթություն», Ե., 2007, 4 ապրիլի, թիւ 13(250), էջ 4:
11. **Շարուրյան Ա.**, «Սրբուհի Տիւսաբ» (Ծննդյան 120ամեակին եւ մահուան 50ամեակին առթիւ), «Զարթօնք», ԻԴ տարի, թիւ 213(7032), էջ 2:
12. **Վարշամյան Արևիկ**, «Կնոջ ազատության ջահակիրը», «Եթեր», Ե., 1911, թիւ 9 (07-13 մարտի), էջ 10-11:
13. **Տայեցի Եսայի**, Հուշագիր կենաց և գործունեության նախկին կայսերական լուսանկարիչ Գեորգ Ապտուլլահի, Վենետիկ, 1929, 269 էջ:
14. **Պողոսեան Հ.Ե.Վ.**, Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, հ. Ա, Վիեննա, 1957, 784 էջ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.թ. Լ.Գ.Մարգարյանը: